# ԴԻՊԼՈՄԱԻՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ

*(Գրչի հանաք)*

---

—«Բարև, Աստուր,
—Բարև, Խաչատուր.
—«Էդ ուր ես այդպէս ոտք առած վազում.
—Նիստի եմ գընում, ինձ են սպասում.
—«Ի՞նչ նիստ, այ խեղօր, այս կէս-գիշերին
Նիստի են կանչում միայն գըժերին.
Մեր նիստի օրը երէկ էր, անցաւ,
Ոչ ոք չէր եկել, նիստ չը կայացաւ։
—Ի՞նչպէս թէ երէկ... Ա՛խ, ներիր, մո՞ն շեր...
Ի՞նչեր եմ փչում... Ի՞նչ որ էս գիշեր
Կընկանըս ասի, որ տանից դուրս գամ,
Նոյնն էլ ես քեզ եմ կըրկնում, բարեկամ...
—«Դէ, ց՞ը... Աստուր,
—Դէ, ց՞ը... Խաչատուր.
—«Ես դէպի կըլուբ, իսկ դու դէպի ուր.
—Ես էլ, բարեկամ (մեր մէջը մընայ),
Ռանդէվու ունիմ... Նիստն է մահանայ...

Ա.Լ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

---